

ՀԱՅՔ

ՀԱՆԴԵՍ

ԱՂԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ՈՒԹԵՐՈՒՄԻ ՏՍՐԻ՝ ՆԻՒ ԵՈՐԻՔ, ՅՈՒՆՈՒԱՐ 1, ԽԻՒ 1. ԱՍԻՄԻՂ ԽԻՒ 145

The Haik,

A Journal devoted to Armenia, Armenians, and
Oriental Peoples.

Edited by M. S. GABRIEL, M. D.
at 341 West 23rd St., New York

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայքի եօթը տարուան հաշիւը և բարեւոյնը.— Խնդիրք.— Ինչո՞ւ զսղեցուցինք Անգլի-երէն ՀԱՅՔը.— Բանձիի երկասիրութիւնները.— Նիւ պոլսը, խուզարկութիւնը և արկածք Եփ-րատի վրայ.— Այլևայլք.—

“ՀԱՅՔ”Ի

ԵՕԹԸ ՏԵՐՈՒՆՆ ԿԱՇԻՒՐ ԵՒ ԲԵՐՆԵՆԵՐԸ

Այս թերթին երևան ելած պահուն, 1891, Յունվար 1ին, շաաք կ'ենթադրէին թէ քանի մը ամիսէն պիտի դադրէր։ Բայց շատ չանցած՝ թէ այս երկրին և թէ եւրոպայի, Ասիայի և Ափրիկէի մեր գաղ-թականութեանց մէջ զօրաւոր աջակիցներ, ընդհանրապէս մշակեալ դասէն, ելան և նկատեցին ՀԱՅՔը իբրև իրենց թերթը, իրենց դրօշակը։ Անոնց մէջ կային քանի մը հարուստներ, և բարձրագոյն կրթու-թիւն առած անհատներ ալ։ Նոքա բա-րոյապէս և յաճախ նիւթապէս ևս զօրա-վիշ և օգնական եղան այս Հիմնարկու-թեան, որ կրցաւ աւել տոկալ այսքան տարի։

Թէ մեր ազգին մէջէն ի՞նչ ոգւոյ և սկզբունքի տէր եղողները Հայքի նուիրե-

ցին իրենց ուշն և ոյժը, և ի՞նչ էր իրենց նպատակը, պիտի տեսնուի եթէ նկատենք թէ ի՞նչ եղած է այս թերթի նպատակը, ոգին, սկզբունքը։

ՀԱՅՔԻ նպատակն էր

Նախ, համոզել թէ ազգային գործոյն մեծութեան ու ղեկարութեանցը համեմատա-կամ պէտք է լինիմ ծեռք առնուելու միջոց-ներն։

Այս մտօք է որ ՀԱՅՔԻ Ա թիւէն սկսեալ մինչև այսօր պնդած ենք թէ խմբային պէսպէս և նոյն իսկ հակառակ ուղղութեանց պէտք է յաջորդէ ազգային ուղղութիւնը, և փոխանակ փափուկ գործը, մահու և կենաց խնդիրը, այս և այն երիտասարդական խմբակներու ձեռ-քը թողլու, հարկ է կազմաւորել փորձա-ռու դիւանագէտներէ և հասուն գործիչ-ներէ բաղկացած ազգային արտասահման-եան վարչութիւն մը, (կեդրոնական Յանձնախումբ) որ ղեկավարէ թէ ներքին և թէ արտաքին կամ դիւանագիտական գործերը։

Այս առաջարկը իրագործել յոյժ կա-րևոր նկատեցին բանխմաց ազգայինք, և քաջալերական արձագանգներ եկան Բա-րիդէն և ուրիշ կեդրոններէ։ Սուրապա-յայի «Հայոց Խրախուսական Միաբանու-թիւնը», իբրև շօշափելի խրախոյս, 600 Ֆրանքի գումար մը փութաց նուիրել կազմուելու կեդրոնի գանձուն, և գու-մարը յանձնուեցաւ Բարիզու Հայրենա-սիրաց Յանձնախմբին։ Կալկաթայի ազ-գայինք ճեպեցին քուէարկութիւն մը կատարել կեդրոնական Յանձնախմբի ան-դամներու ընտրութեան համար, արգելե-ք լինելով

Նուպար Փաշա,
Մելքոն Խան,
Մինաս Չեռազ

և երկու ուրիշ անդամներ:

Ցաւալի է որ առաջարկը չկրցաւ իրագործուիլ:

ՀԱՅԲԻ բոլոր բաժանորդք կամ ընկերք, խորին վշտով տեսած լինելով թէ ինչքան զարհուրելի եղան մասնաւոր խմբերու իրարմէ անկախ կերպով գործելուն արդիւնքը, այժմ աւելի քան երբեք կը զգան թէ իրենք անհուն իրաւունք ունէին, և աւելի քան երբեք համոզուած կը մնան թէ մահահոտ վիճակի ենթարկուած Հայաստանի բաղդը լաւացնելու համար հարկ է կազմել բաղձացեալ կեդրոնը:

Բ. Սկզբումք, ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ, այսինքն մեր պահանջներու չափը մեր ուժերու չափին համեմատել, և Հայաստանի համար Հայաստանի վիճակին յարմար բան մը ձեռք բերելու աշխատիլ, սկսիլ հարկաւորէն՝ հասնելու համար բաղձալիին: Նաև ներքին ուժերը բանի մը բերելու համար, կազմաւորել զայնս: Բոլոր մեր յոյսը օտարաց օգնութեան վրայ դնելով թոյլ չմնալ, բայց և այնպէս ճանաչել արտաքին աջակցութեան հարկաւորութիւնը: Հնչակեանց դէմ մեր քննադատութիւնք սկզբէն այդ տեսակետով եղած են: 1891 ին կը գրէինք թէ (1) Հնչակեանք «չեն թուիր բաւական նկատած լինիլ այն սկզբունքն որ կը պահանջէ թէ դրութիւնն պարտի յարմարիլ այնմ որուն կ'ընծայուի: ... (2) Հնչակեան ծրագրի մէկ գլխաւոր թերին ալ այն է որ Հայ ժողովրդի յեղափոխական բոլոր կարելի շարժումներն ի հաշիւ կ'առնու, առանց դիւանագիտական միջոցներու ևս կարեւորութիւնը ճանաչելու: ... (3) Նաև պարտին համոզուիլ թէ Ռուսիա է այն պետութիւն որ կրնայ առաւել քան զայլ ամենայն օգնել կամ փնտսել մեզ: Նա ճիշդ մեզ կից է: Կրնայ մեզ քարին զարնել, կրնայ մեզ վեր բռնել իւր հզօր բազկաւ և ի հեճուկս ամենուն: Նա ունի ներկայ դարու ահագին գինուորական ոյժն՝ լծակից անցեալ դարերու գաղափարաց: Նա կրնայ լինիլ ուրեմն մեր լաւագոյն բարեկամն ինչպէս և յոռեգոյն թշնամին: Մեծ պիտի լինի փառքն այն Հայոց որք պիտի յաջողին Ռուսիային

ներշնչել խորին համակրութիւն դէպ ի Հայաստան՝ դիւանագիտութեամբ:» (Տես ՀԱՅԲ, Թիւ 18, 1891):

Վերջին քանի մը տարիներու պատմութիւնը առատօրէն ցոյց առաւ մեր այս տեսութեան ճշդութիւնը: Եւ դիտելի է թէ Ռուսիոյ մասին այդպէս խօսող թերթը միայն ՀԱՅԲն եղած է: Միայն քանի մը ամսէ ի վեր՝ մեր այդ տեսութեան յամեցեալ արձագանգը կուգայ Պուլկարիոյ «Իրաւունք» լրագրէն, և ազգային խմբագիր մը կը փութայ յայտարարել այդ առթիւ թէ Հայ ժողովրդի զգացումներն կը ներկայացնէ նորաբուսիկ թերթը, և կը մոռնայ հինը, սկզբնաւորողը:

Այդ ալ գուցէ դիւանագիտութեան պահանջներէն է:

Գ. Սկզբումք, ԱՆԱՉԱՌՈՒԹԻՒՆ դէպ ի խմբակցութիւնները ինչպէս նաև դէպ ի ժողովուրդը: 1893 ին էր երբ Հնչակեան ջոջերէն միոյն հետ (Ն. Կ.) անձնական ծանօթութիւն ունեցայ և յստակ զաղափար մը կրցայ կազմել Հնչակեաններու ոգւոյն և ձգտումներուն վրայ: Ն. Կ. ի հետ շատ անգամ երկար խօսակցեցայ, և միանգամ նա յայտարարեց ինձ թէ ազգային գործէն իսկոյն կը հեռանար ինքը եթէ չյուսար թէ Հայաստանի մէջ սօսիալիստ մը պիտի յաղթանակէր: Ուրիշ հարիւր ու մէկ բաներ դիտելէ և իմանալէ յետոյ սկսայ խոսիլ քննադատել Հնչակեանները: Ասոր վրայ ահագին դուրսկան Հնչակեանք ՀԱՅԲի դէմ, և դեռ չեն դադարած:

Բայց անաչառութիւնը մեզի համար խածանութիւն, վայրահաչուութիւն, յախուռն ամեն բան ու ամեն գործիչ դատապարտել չէ: Օրինակի համար յիշենք մեր դիրքը Օրմանեան Պատրիարքի հանդէպ: Արտասահմանի Հայ լրագիրները նորընտիր պատրիարքին վրայ պարտաւանաց կարկուտ մը կը տեղային երբ ՀԱՅԲ, յիշեցնելով պատմական ներկայ պահուն անօրինակ դժուարութիւններն, կը համարձակէր ասել թէ «զգօն երիտասարդները պէտք է համակրին Օրմանեանի, Տատեանի, որք քաղաքագիտօրէն կը շարժին, այսինքն կը ջանան անել ազգին այն փոքր ծառայութիւնը զոր կարելի է մատուցանել այս ամենադառն պահուս» (Հայք, Թիւ 8, 1897):

Դ. Սկզբունք, ԳԻՏԱԿԱՆ ՈՒՄ: Ազգասիրութիւնը ճշմարտութենէ վեր դնել, ազգին չունեցած գերազանցութիւններն անոր վերագրել, վիճելի և նոյն իսկ հերքել փաստերով ազգը, անոր լեզուն, եկեղեցին փառաւորել—ահա այդ է չօվինիսմ: Ազգային ոգւոյ մեր մէջ արթնալէն ի վեր հասարակ ախտ մը դարձած է հայրենասիրական ունայնամտութիւնը որ եսամուլութեան մէկ փայլուն ձևն է, յաճախ պարզմտութեան հետ խառնուած: Մեր ուղղագրութիւնն ու բառագիտութիւնն անգամ ազգուած են այդ հակադիտական սգիէն: Մեր լրագիրները 10 կամ 15 տարիէ ի վեր Քարբերդ կը հնգեն խարբերդ անունը, յորմէ հետէ լեզուագէտ մը կարծիք յայտներ է թէ խար բառը չգիտեմ ինչ օտար բառ է, (հայերէն ալ կայ «խար» բառ) և քանի որ բերդ մը քարէ կը շինուի— պէտք է ուղղել և ասել Քարբերդ: Մեք անհնար չենք համարիր որ ուղիղը Քարբերդ եղած լինի, բայց չենք կարծեր թէ յառաջ բերուած փաստերը կ'արդարացնեն ուղղագրական փոփոխութիւնը: Պէտք է ցոյց տալ թէ հնագոյն մատենագրութեան մէջ Ք—ով գրուած է այդ անունը: Ի պակասել այդ փաստի, պէտք չկայ ենթադրելու թէ խարբերդ գաւառի բոլոր հայ ազգաբնակչութիւնը սխալ կը հնչէ քաղաքին անունը, իբր թէ քար—ին քար ասող ժողովուրդ մը Քար—բերդին Քարբերդ ասել չկրնալով՝ հնչած լինի զայն խարբերդ: Նոյնպէս սովորութիւն է եղեր զՏիարպէթի քաղաքը Տիգրանակերտ կոչել, անուն մ'ալ հայացուցած լինելու սիրով: Բայց տղայական է փորձը վառն գի հայկական Տիգրանակերտը, ըստ պատմաբանից, Տիարպէթի տեղը չէր և ոչ անոր մօտերը: Անոր աւերակները տեղ մը թաղուած կը մնան, և յոյս ունինք թէ օր մը հնախոյգը պիտի գտնեն ու հանեն զայն գերեզմանէն—Մեծին Տիգրանայ մեծ մայրաքաղաքը:

«Հայք» հակառակ է այդպիսի սին, ոչ-ճշմարիտ ազգասիրական միտումներու, և ազգին ոչ փառք, այլ փնտռելու համարի հաւատալ և օտարաց հաւատացնել թէ Հայոց քաղաքակրթութիւնը ամենէն հինն է, Հայերը Եւրոպայի (ոչ թէ Ասիոյ) ամենէն աշխատասէր ժողովրդոց չափ աշխատասէր են, և այլ նմանօրինակ սխալներ:

Այս սկզբունքներով կառավարուած է ՀԱՅՔ: Այսպիսի սկզբունք սիրողներն եղած են անոր բարեկամներն ու ընթերցողները, այսինքն մերայնոց մէկ փոքրամասնութիւնը: Եթէ կուսակցութիւնները քննադատելէ խորշելով, և մանաւանդ անոնց հաճելի լինելու ջանքով, ՀԱՅՔ անգոյն լինէր կամ գունաւոր իւր կարծեաց մէջ, և եթէ կարգ մը ռամկական շանչանաբանութիւններ հիւրընկալէր, անտարակոյս կրկնապատիկ աւելի բաժանորդներ կ'ունենար, և սակայն, համարձակ և ճակատաբաց կը յայտարարեմ, թէ և սին պարծանք թուի ոմանց, թէ դրօշակը բարձր բռնել, ճշմարտութեան յարած մնալ, ազգին օգուտը ջատագովել եղած է այս թերթին ուղղութիւնը ինչ թական փնտռութիւն, որուն փնտնոց մէկ մասը, երախտագիտութեամբ կը հաշակեմ, անոր բարեկամները յանձն առած են ազգասիրաբար տարուէ տարի:

Մեր ընկերները, աջակիցները չկարծեն թէ անօգուտ եղած են այս բոլոր շահաբերութիւնք: Այն ողջամիտ գաղափարներն զորս տարածեցինք և ազնիւ օրինակը զոր տուինք, անշուշտ ունին իրենց ազգօգուտ արդիւնքը, թէ և ոչ բոլորովին մեզի երևելի:

Հիմա որ ազգը արիւնյուայ է և շուարած, պիտի շարունակենք մեր զօրացուցիչ և լուսասփիւռ պաշտօնը կատարել նռանդով և աւելի կատարելագործուած միջոցներով:

Մասնաւոր շնորհակալութիւններս կը մատուցանեմ մեր Բարիգի Հայրենասիրաց ինչպէս նաև Ճավայի Սուրապայայի Հայոց Խրատուական Միաբանութեան, Պագավիոյ ազգայնոց, մեր պատուակալ գործակալներուն, մեր թղթակիցներուն, մեր բոլոր նուիրատուներուն, նաև այն ամեն խմբագրութեանց որք այլևայլ կերպով պատուեցին այս թերթը, և կը յուսամք թէ մեր հին ու նոր բարեկամները աճեցուն համակրանք և ուժով վեր պիտի բռնեն իմ ծանրաբեռնեալ թերթը, և պիտի ջանան այս թերթին կատարելագործմանն ու աւելի ընդարձակ շրջանի մը մէջ օգտաբերութեանը:

Ընկերներ, բարեկամներ, բաժանորդներ, ձեռնէ իւրաքանչիւրին կը յղեմ սրտագին բարեկներս:

Խմբագիր

Մ. ՍՄԲԱՏ ԳԱՅՐԻԷԼԵԱՆ

ԽՆԴԻՐՔ

Մեր յարգոյ բաժանորդները թող հաճին անյապաղ հասցնել մեզ իրենց բաժանորդագիրն 1898 թուականին համար: Շնորհակալ ենք անոնցմէ որք օրինակելի կանոնադրութեամբ կը վարուին:

Մեր բաժանորդներէն ոմանց Հայքի ներկայ թիւէն աւելի քան մէկ օրինակ չլը յղենք, այն բաղձանօք որ գործածեն աւելորդն իրրե նմոյշ՝ նոր բաժանորդներ գտնելու համար:

Կը զգուշացնենք առանց ապահովագրելու չյղել թղթադրամ պարունակող նամակներն: Մընի օրտըր յղելու համար այս զգուշութիւն հարկաւոր չէ:

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԱՅՔԻ տարեկան բաժանորդագիրն է երկու տոյար, կամ 10 Փրանք, (4 ռուպլի), ամեն երկրաց համար:

Հասցէ— Editor of Haik,
341 West 23rd St. New York

ԻՆՉՈՒ՞ ԴԱԴՐԵՑՈՒՑԻՆՔ

ԱՆԳԼԻԵՐԷՆ «ՀԱՅՔԸ»

1897 ին առաջին ամիսներուն մէջ ինը թիւ հրատարակեցինք անգլիերէն ՀԱՅՔԻ, և հարկադրեցանք դադրեցնել: Փորձառութիւնը ցոյց տուաւ թէ Ամերիկացիք կ'ախորժին կարգաւ Հայոց և Հայաստանի վրայ գրող թերթ մը, բայց բաժանորդ գրուելու չափ յառաջ գնացողներն բացառութիւն են: Թիւերէն ոմանք 3,000 և աւելի օրինակ ապեցինք և ամեն նահանգ յղեցինք իրրե նմոյշ: Ընդ ամենը աւելի քան 20,000 օրինակ բաշխեցինք: Եղաւ որ մէկ թիւին լոկ թղթին համար 17 տոլար ծախք արինք: Բոլոր ծախքը 300 տոլարի հասաւ, և եկամուտը... հազիւ յիսուն տոլարի: Այդքան փնասով թերթ հրատարակել մեր կարողութենէն վեր էր, և մեր գաղթականութեան ունեւոր անդամներուն ալ... տարողութենէն վեր էր, ուստի և դադրեցուցինք զայն և կը փնայ դադարած:

Մեր ազգին մէջ ազգօգուտ ձեռնարկներն ոչ միայն նիւթական փնաս կրնան բերել ձեռնարկողին, այլ և երբեմն, դժբախտ արժէքը շատ լաւ ճանաչողներուն առջև, ծաղրելի կ'անեն զինքը:

(Չերադ իւր թերթին անգլիերէնն ալ հրատարակեց երկու կամ երեք տարի, բայց տարեկան ութ հարիւր տոլարի նպաստ մը ընդունելով առ այդ:)

ՐԱՅՖԻԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Շարունակուում է բաժանորդագրութիւն —

1. «Սամուէլ» Հ. Ա. Բ. և Գ.
 2. «Դաւիթ—Բէկ» Հ. Ա. Բ. և Գ. վերջաբանով:
 3. «Կայծեր» Հ. Բ. լիակատար:
- Երեք գրքերի բաժանորդագիրն է միասին 12 շիլինգ. իսկ լոյս տեսնելուց յետոյ մի անգ. ոսկի:

«Սամուէլը» արդէն մամուլի տակն է և լոյս կը տեսնի Յունվար ամսին:

ՐաՅՖԻ վաճառելի երկերն են՝

1. «Խենթ և Ջալալէդդին» մի գրքի մէջ ամփոփուած գիրն է 6 շիլինգ
2. «Կայծեր» Հ. Բ. (սակաւաթիւ) 4½ —
3. «Վէպիկներ և Պատկերներ» Հ. Ա. և Բ. 9 —
4. «Խամսայի Մեղիքութիւնները» 4½ —
5. «Ջահրումար» վէպ 4½ —
6. «Կայծերի Կտակը» 2½ —
7. «Խաչագողի Յիշատակարանը» չորս մասերը մի գրքի մէջ 5 —
8. «Մինն այսպէս և միւսն այնպէս» պատկերազարդ վէպ 2 —
9. «Տաճկահայք» 1 —

Բաժանորդագրութեան և վաճառելի գրքերի համար դիմել՝

Mme. Raffi

270 W & Bridge Road
Shepherd's Bush
London W.

Մեծտոր Անգլիերէն Լեզուի

Աշխատասիրեաց և Հաւաքեց

Տիգրան Մ. Պետրիկեան

Նիւ Եորք, 1897:

336 երես, կը պարունակէ համառօտ քերականութիւն մը, նամականի մը, խօսակցութիւն ընտանեկան, առեւտրական և այլն, և Հայերէնէ Անգլիերէն ու Անգլիերէնէ Հայերէն երկու բառարաններ: Եօթը հազար բառ կայ:

Դինն է 50 սէնթ կամ 2½ Փրանք:

Դիմել առ ՀԱՅՔԻ խմբագիրն

341 W. 23d St., N. Y.

Արժէքը կանխիկ չյղողին գիրք չենք կրնար յղել:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
Շնորհակալութեամբ ստացած ենք
հետեւեալ անգլիերէն մատենը—
NIPPUR

EXPLORATIONS AND ADVENTURES
ON THE EUPHRATES

BY

JOHN PUNNETT PETERS, PH. D.

Director of the Expedition

With Illustrations & Maps.

G. P. Putnam's Sons

New York & London

1897

Ա. Հատոր 375 էրես, Բ. Հատոր 420 էրես
Գին երկու հատորին 5 տոլար:

Նիպուրը հնախօսական կարևոր
հրատարակութիւն մ'է բազմաթիւ պատ-
կերներով լուսարանեալ: Այժմ գրքին մէջ
Հայոց և Թրքաց մասին ևս խօսելու ա-
ռիթներ ունեցած է Պատ. հեղինակը և
մենք քանի մը հետաքրքրական կետեր
կրնանք հաղորդել մեր ընթերցողաց:

Տր. Փիթըրս Հայերուն նայելով ցե-

ղաքանի աչօք՝ կը տեսնէ իւր սպասաւոր-
ներուն մէջ երեք տարբեր տիպարներ:
Նորտիկ, խոհարարը, ունի կատարեալ
հնտերոպական տիպար, Արթին և Գէորգ
խոշոր սեմական, և Հաճի Գէորգ մոնկոլ-
եան տիպար: Եթէ ուշադրութեամբ
նայի սք մեր հայկական ժողովներուն,
կրնայ դիւրաւ տեսնել այդ երեք տիպար-
ներէն ալ օրինակներ: Հրէական տիպարը
չառ հազուադիւտ չէ մեր մէջ: Եւ-
րոպացի խմբագիր մը որ զԴր. Արծրունին
տեսած էր և շատ սքանչացած անոր
տաղանդին վրայ, կ'ասէր մեզ օր մը թէ
նա սեմական տիպար կը կրէր: Սակայն
եթէ մանր միտ դնէ ոք, պիտի գտնէ հայ
սեմական և հրէայ սեմական տիպարնե-
րուն միջև ալ որոշիչ տարբերութիւն:

Տր. Փիթըրս առիթ ունեցած է թուրք
պաշտօնէից բարեպաշտութեան վրայ գա-
ղափար մը ձևացնել: Պաղտատէն ի Բե-
րիա ուղեկից եղած է խալիլ փաշայի:
Փաշային ուղընկեր էր իմամ մը: Ամեն
օր, ճամբուն կիսուն, կարաւանը պէտք է
կանկ առնուր սրպէս զի նոցին բարեպաշ-



ն կեդրոնին, յունական թէրա—քօթա
գլուխ մը, լաւ շինուած՝ որ ունի գունդ մը-
նացորդներ: Թուականը՝ իբր 300 նախ քան
գ. Քրիստոս—Աջ և ձախ կողմերը, կոշտ կաւէ
ձևեր, որք հաւանականօրէն կը մերկայացնեն
Բէլ աստուածը, Ժ քրոյ այրած տմերուն
մէջ գտնուած: Թուական, իբր 2500 Ն. Ք. գ. Քր.
—Առջևը, վարով, շուն մը, կարծր կիտուա-

ծով քոնալ: Գտնուած է Ե քրոյ մէջ, երկր
երեսէն 14 մետր խորը: Թուական, իբր 2500
Ն. Ք. գ. Քր.— Սորա աջ կողմը, կաւէ լկտի ձև
մը, Ե քրոյ մէկ գերեզմանէն: Ասոր ձախ
կողմը, կապոյտ կիտուածով ծածկուած ձևիկ
մը եզրիպտական ճարտարութեամբ, Ա քրոյ
քարեղոնական գերեզմանէ մը:

տուութիւնք, փաշա և իմամ, իրենց աղօթքը մատուցանէին: Պատ. Փիթըրս լաւ տպաւորութիւն կ'ընդունի և կը նկատէ զփաշայն իբրեւ աստուածավախ մահմադական մը: Հետեւեալ տարին դարձեալ դէպք այնպէս կը բերեն որ Փիթըրս և իւր ընկերացիք լինին: Այս անգամ փաշային հետ ոչ իմամ այլ ուրիշ փաշա մը կար, և երկու փաշաները ամեն երեկոյ կ'արբենային:

Ուր մնաց նախորդ տարւոյ ջերմեանք և աղօթասէր փաշայն:

Մատնանին հնախօսական շահեկանութեանը գալով՝ կարելի չէ կատարեալ գաղափար մը տալ այս անձուկ իջերով: Յիշենք սակայն քանի մը բան:

Տր. Փիթըրս կը ցուցնէ թէ Բէլի տաճարին, որ ի նիպուր, և Եհովայի տաճարին միջև՝ որ յերուսողէմ, կան նմանութեան մասնաւոր կէտեր: Հասկնալու համար ըստ արժանւոյն հրէական տաճարին նշանակութիւնը և անոր պաշտամանց եղանակը՝ պարտինք ուսումնասիրել ճշդիւ տաճար մը որպիսի է Է-քուրինը, էն—Լիլի (փոթորկի աստուածին) տունը, ի նիպուր, ամենէն հին տաճարը որու նկատմամբ բան մը գիտենք, և որ իտրին ազդեցութիւն մը գործած է Բաբելոնի և Ասորեստանի կրօնական դարգացմանը վրայ, և անոնց միջոցաւ բովանդատի սեմական աշխարհին վրայ:

Ամենէն հետաքրքրական երեւոյթն են անոնք որ նուիրուած են գրութեան արուեստին պատմութեանը: Սարկոնի դրան արձանագրութիւններն կը ցուցնեն թէ նորա ժամանակը, 3800 ն. ք. գ. ր., գրելու արուեստը շատ մեծ յառաջդիմութիւն արած էր: Այդ արձանագրութեան առաջին նշանը, ասող մը, կը նշանակէ երկինք կամ Աստուած: Այդ նշանը յայտնապէս պատկերային ծագում ունի: Չորրորդ տողին առաջին երկայն ձևը կը նշանակէ թագաւոր, կռնակին վրայ պառկած մարդ մը որ թագակերպ նշան մունի ի գլուխն: Այս թագանման նշանը պայմանադրական նշանակն է մեծ կամ խոշոր—ի և կրնայ ուրիշ նշանաձևներու սկիզբը կամ վերջը աւելցուի՝ անոնց նշանակութիւնը զանաղունելու համար: Բայց նշաններուն մեծագոյն մասը պայմանադրական տեսակէն են, այնպէս որ

անկարելի է անոնց ձևէն գուշակել թէ ինչ ծագում ունին:

Ամենէն հին սեպագծեւ արձանագրութեան նախորդը պատկերագրութիւն եղած է: Հիւ պրէխթ քառասուն պատկերաձև ուսումնասիրած է Բաբելոնեան արձանագրութեանց մէջ: Անոնք ընդհանրապէս պարզ առարկաներու պատկերներ են, ինչպէս արեւ, աչք, լեզու, ձեռք, ոտք, ցորեն, նետ ևն: Այդ մարդու և կնկան նշաններն, որք տրական և իգական ծննդական գործարաններու պատկերներն են, կը ցուցնեն թէ ինչ աստիճանի մշակութիւն ունէին մարդիկ երբ գրութեան այդ ձևը սկսան:

Սակայն հնագոյն արձանագրութեանց մէջ որք մինչև այժմ գտնուած են, այդ պարզ պատկերներն ունին արդէն երկրորդական կամ հանուած նշանակութիւն: Ոտքի պատկերը «գնայ» կամ «կանգնել» կը նշանակէ: Լեզուինը՝ «խօսիլ»՝ աչքինը՝ «տեսնել»՝ նետինը՝ «բաժնել»: Աւելին կայ. նշաններն իրարու կցուելով կամ կրկնուելով կամ այլապէս եղանակաւորուելով՝ կ'արտագրեն բազմաթիւ բարդ տառեր կամ բառեր:

Արդեօք գրութեան սկզբնական ձևին ևս աւելի մօտ գնացող արձանագրութիւններ պիտի գտնուին կը յուսացուի: Մինչև վերջերս գտնուածները կը ցուցնեն թէ կաէ տախտակներու վրայ գրութիւնը Բաբելոնական մէջ ի կիր կ'առնուէր իբր 5,000 կամ մինչև անգամ 6,000 տարի Քրիստոսէ առաջ:

ԵՅԼԵԵՅԼՔ

Ուրախութեամբ իմացանք թէ Եհնայի Համալսարան, ի Գերմանիա, Lequm Doctor (L. L. D.) աստիճանը տուած է Հայր Ղևոնդ Ալիշանի: Թերթ մը, այդ լուրը տալով, կ'ասէ թէ Հ. Ալիշանի բարեկամներէն մին էր մեծահամբաւն Հումպոյթ. այս վերջինն ջանաց, կ'ասէ, ծառայեցաւ զՀայր Ալիշան Կայսեր Ուիլհելմի, բայց համեստ հայ գիտունն խոնարհաբար մերժեց:

Եհնա անուանի Համալսարան մ'է և Ալիշան՝ անուանի գիտուն. վասն որոյ ազգայնոցս համար բերկրալի է լսել թէ այսպիսի մի Համալսարան գիտցած է պատուել այսպիսի մի մարդ—Կեցցէ՛ Եհնա: Կեցցէ՛ Ալիշան:

Հէրալտի թղթակից Հէփուորթ ընդարձակ նամակներ սկսած է յղել Հայաստանէն: Ահաւասիկ կարինէն և Բաղէշէն գրածներուն ամենէն չահեկան կէտերը:

Կոտորածներուն բուն պատճառը կրօնական մոլեռանդութիւնը չէ այլ Հայոց քաղաքական ձգտումը դէպ ինքնավարութիւն: Շատ մը նկատմամբ կը սքանչանամ ես Հայոց վրայ, բայց նաև կը մեղքընամ որ անյուսալի գործի մը ձեռնամուխ եղիք են: Մեք Ամերիկացիքս կը համակրինք ու և իցէ ժողովրդի որ ինքնավարութեան կը ցանկայ և կարող է ինքն իւր օրէնքներ դնել, բայց աղտոտութեան համար մրցիլ այնպիսի պարագայից մէջ սրտեք անհնար կ'անեն յաջողութիւնը, և կը խորասուզեն ամբողջ երկիրը կորստեան անդունդը, գործնականօրէն ոճիր մէջ: Ամերիկայի գաղութք այդպիսի պարագայից տակ չէին երբ Անգլիոյ դէմ ելան:

Բայց երբեք կարող չպիտի լինի՝ հասկնալ թրքին քաղաքականութիւնը որ քանի մը անհատներու ոճիրը պատժելու համար, կոտորածի կենթարկէ հազարաւոր անմեղներ: Ամերիկեան արիւնը չի կրնար այդպիսի բան մը չքմեղել, և սակայն այդ է պատահած ահաւոր իրողութիւնը ամեն տեղ ուր ցարդ այցելած եմ:

Պէտք է նաև հռչակել թէ Հայք դժգոհութեան ծանր պատճառներ ունեցած են թուրք կառավարութենէն և աւելի համբերատար գտնուած են քան մեք պիտի գտնուէինք նման պարագայից մէջ. և բնական է որ չսիրեն կառավարութիւն մը որ պատերազմի շուները իրենց վրայ վազցուց:

Անցեալ 1896 ին, Լժնտոնում մի հայ սպաննուեցաւ խարսերգի Նիկողոս անունով՝ նրա տիւր որդին կ'ուզէ իմանալ իր հօրը ինչպէս սպաննուիլը: Յարգելի ազգայինք որոնք տեղեակ են սպաննուելուն և դատի մասին, կը խնդրուի որ հաճին գրել հետեւեալ հասցէին—

Գ. Կ. Կոչկակարեան

P. O. Box 35
Madison, Maine
U. S. A.

ՆԱՄԱԿ ՊՈՍԹՈՆԷՆ

Պոսթոն, 16 Դեկտ. 97.

Խմբագիր, խնդրեմ թոյլ տաք ուղղել «Տիգրիս»ի Թ. 5 ին մէջ տպուած ուրը իւր թէ Խաղ վարդապետը հոս «Հոգեհանգստի սաշտօն կատարեր է Խանասորի նահատակներուն ի յիշատակ» և գարձեալ Խաղ վարդապետը «նոյն երեկոյ ընդհանուր ժողով մը գումարած է» եղելութիւնը այն է թէ տեղւոյ շ. Յ. Դաշնակցութեան կոմիտէի խնդրանք վարդապետը սաշտօնը կատարեց, և նոյն կոմիտէն էր որ ընդհանուր ժողով ունեցաւ, ուր խօսեցան Տ. Տ. Կ. Գարակիւլեան, Պ. Յակոբեան, Վարդ Վրայր, Տ. Վահանեան: Նոյնը եղած է շրջակայ բոլոր քաղաքները:

«Տիգրիս» թող հոգ տանի տեղեկութիւնները ճշգիւ հաղորդել, կամ բոլորովին լռել:

ՎԱՐԱԺՆՈՒՆԻ

ՆԱՄԱԿ ՀԸՏՈՐՆԷՆ

Խմբագիր,

Կարդացի «Տիգրիս»ի մէջ Խարսերգի Տիգրիս Պէշկէօթիւրեանի մասին գրուածը, որով կ'աղաղակէ խմբագիրը որ նորա սպականները Պոսթոնէն, Ուսթըշէն և Փաթէրսընէն ժմեն գինքը Գառլ կարողնի յուսահատութեան փոսէն հանելու: Զարմանալի՛ բան. Տիգրիսի արագահաս ալիքներուն Պոսթոն հասնելէն քանի մը օր առաջ յիշեալ Տիգրիսը Պոսթոն հասած էր իւր սիրելւոյն քով: Կը խնդրեմ Պ. Տիգրիսէն որ լուր մը հրապարակ հանելէ առաջ լաւ հասկնայ և ստուգէ:

Գ. Յ. ՊԵՇԿԵՕԹԻՒՐ.

ԳՐԻ ՄԵԲԵՆԱՅ ԵՒ ՀԵՄԱՆԻ

Խաղարոս Խալաճեան իր հայերէն և անգլիերէն գիր գրող մեքենան և լաւ պայտիքներ չատ ածան կը ծախէ, նաև պայտիք շինելու արհեստն վեց ամիսէն կը սորվեցնէ: Ուզողք շուտով թող դիմեն որովհետև մտադիր է քանի ամիսներ վերջը եգիպտոս երթալ հոն պայտիքի վործ շարունակելու: Խալաճեան իր վերջին հնարած պայտիքի պատկերն ձրի պիտի խրկէ:

Kallajian 588 Shammut Ave. Boston, Mass.

ՎԵՐՋԻՆ ԴԵՊՔԵՐԸ

Աշխարհի ուշագրութիւնը ծարազոյն Արեւելքի դարձած է: Գերմանիա, որ Անգլիոյ ծովային տիրապետութեան նախանձելով կը նախանձի, գրաւած է չինական նաւամատոյց մը, զՔիաօ Չու խորշը: Ռուսիա, գաղտնի հասկացողութեամբ մը Չինի հետ, կը ստանայ զՓորթ Արթըր, ուրիշ կարևոր չինական նաւամատոյց մը: Անգլիա կ'աղաղակէ թէ զօրութեանց հաւասարակշռութիւնը այդպէսով կը խանգարի, և հարկ է որ ինքն ալ կտոր մը առնու: Ժաքոն ամենէն աւելի դժգոհ է տեսնել որ հեռաւոր տերութիւններ իւր դրացի երկրին բաշխումը սկսին այդպէս: Միացեալ Նահանգաց կառավարչութիւնը չէզոք մնալ կ'ուզէ և առայժմ մասն ու բաժին չի պահանջեր ոչ կռուի ոչ հողի: Փռանսա վստահ կ'երևի թէ իրեն ձեռքն ալ բան մը պիտի անցնի: Դիւանագիտական պայքարը հազիւ թէ սկսած է, բայց մեծ կասկած կայ որ Ռուսիա և Ժաքոն գան ի կռիւ յառաջիկայ ամառը, և երկուքն ալ պատերազմական պատրաստութիւններ կը կատարեն ամենայն փութով: Ռուսիա անբաւ ռազմամթերք կ'ի գնէ Միացեալ Նահանգաց մէջ: Բրակի զօրանոցներուն մէջ Չեյն և Գերման զինուորաց միջև արիւնհանգը ընդհարումներ տեղի ունեցեր են:

Կ. Պոլսէն Դեկտ. 22 թուական հեռագիր մը կը ծանուցանէ թէ Չմիւռնիոյ շուրջը սաստիկ շարժ ելեր է, պատճառելով բազում ֆրանս ստացուածոց և կեանքի:

Ստացոնք Տիար Մեսրոպ Գ. Քիւրքճեանի ամուսնութեան լուրն ընդ Օրիորդ Փէրուզ Մանկերեանի, ի նիւ Եորք. պսակի արարողութիւնն կատարուած է Պատ. Հայկակի ձեռամբ: Օրիորդը երկարատեան Կ. Պոլսոյ բարձր դպրոցներուն մէջ կրթութիւն առած և այժմ իւր բնակատեղւոյն մէջ միակ հայ ընտանիքը ըլլալով շատ շնորհք գտած է բնիկ Ամերականներէն, ի կրէնտ Բէփիաս:

Տիար Նշան Մկրտիչեանի և Օրիորդ Զարուհի Արմաղանեանի պսակը եղաւ ի Փէթըրսըն: Պատ. Յ. Մ. Հայկունի, փեսային եղբայրն, պսակեց զանոնք, ի ներկայութեան նիւ Եորքի և Փէթըրսընի հայ բարեկամաց, որոց փառաւոր խընձոյք մը տրուեցաւ պսակէն վերջը: Աստուած շնորհաւոր անէ:

Մովսէսեան ընտանեաց համար նիւ Եորքի Հայոց Բարեգործական Ընկերութեան միջոցաւ հանգանակուած դրամոց մանրամասն հաշիւն է յետագայն զոր նախորդ թուով խոստացած էինք հրատարակել:

Հանգանակութիւնք

Ա. Ե. \$10, Ն. Պ. Չ. \$10, Յ. Ս. Թ. \$15, Ս. Ս. Կ. \$5, Ռ. Ե. \$2, Յ. Թ. \$5, Ս. Ա. Ք. \$1, Յ. Յ. և Խ. Վ. \$3, Ա. \$1, Ղ. \$1, Տ. Կ. Ք. \$5, Հ. \$1, Փ. \$1, Salvation Army \$10, Թ. և Տ. Տ. \$5, Մ. Գ. \$5, Կ. Կ. \$16, Յ. Գ. \$5, Յ. Մ. Հ. \$2, Հ. Բ. Ընկ. \$1.45: Որոյ գումարն է, \$105.45:

Ծախք

Նիւ Եորքի մէջ Տիար Մովսէսեանի տրուած դրամն է \$4. կառքի և express, \$3.95 2 թիւքէթ. նիւ Եորքէն Ֆրէզնո, Քալիֆորնիա 87.50 ճամբու ծախսոց համար, 10: Ընդ ամէնը \$105.45:

**

ԹԵՆԿ ԸՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Հին ձեռագիրներ (manuscripts) և դրամներ կը գնենք, ինչպէս և ուրիշ պատուական հնութիւններ: Մեր վաճառատունն է ի թիւ 390 5th Ave., նիւ Եորք.

ՏԻԳՐԱՆ ՔԵԼԷԿԵԱՆ:

**

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ. Էվինիու

Նիւ Եորք

26դ և 27դ. փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

JOHN C. MORRISON

Յ. Ս. ՄՕՐԻՍԸՆԻ

ԴԵՂԱՐԱՆԸ

Կը գտնուի ի թիւ 262 Ութերորդ Էվինիւ, Մեծ Օբէրային հանդէպ 23 և 24 ուր փողոցներուն միջև:

Վստահելի դեղեր, բանաւոր գներով կը ծախենք:

Տ Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն
Խ. Ս. Գ Ա Բ Ի Ե Լ Ե Ա Ն